

ԲԱԺՆԵԳԻՆ

ԵԳԻՊՏՈՍ
Տարեկ. 50 շաբաթ
վեցամս 25 րոպ

ԱՐՏԱՍԱՀԱՐՆ
Տարեկ. 13 ֆր
վեցամս. 7 րոպ

Ամերիկա
2 Տոյ. 30 սենթ
ԱՐՆԻԻԿ
→←



ՊԱՅՄԱՆՔ

Գրութիւնք ետ
չեն արժիր:

Պատուցումներ
մասնաւոր պայ
մաններով:

→←
Հասցէ

DIRAN
PAPAZIAN
ALEXANDRIE
(EGYPTE)

Թիւր 1 Ղր. ողջ

ԾԱԲԱԹԱԹԵՐԹ

Թիւր 1 Ղր. ողջ

ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԶԱՒԵՇՏԱԿԱՆ

Ը. ՏԱՐԻ

ՄԱՅԻՍ 12 ՀԻՆԳՇԱԲԹԻ 1904

ԹԻԻ 304

Մեր գրատան մէջ կը ծախուին նաև բարիզէն
նոր եկած հետեւեալ գիրքերը.

	Փր.	սնդ.
Պատմ. Ժ. Գարու հայ դպրութեան	5	
Քաղկեդոնական ժողով և Հայ. եկեղեցի	2	50
Իրանի հերոսները հայ ժողովուրդի մէջ	1	30
Բաղդատական բերականութեան ծագումը	1	
Զանգուրու մ. վիճակախաղ (600 տուն)	80	
Օրուան մը մէջ լուսանկարիչ ըլլալ	50	
Վերածնութիւն Հայաստանի, պատկերով	65	

Նաև Բրո-Արմէնիայի խմբագրապետ Պ. Բիէո Քիլիսի,
Ժանօթ հայասեր Ժօնէսի, Մեծին Տրդատայ և Անիի ա-
ւերակներու պատկերներով բառ-բառով լրացուած ծախուին
10 հատը 1 ֆրանքի:

ԱԶԳԱՅԻՆ

Վեհ. Հայրեկը 100 բուպի զրկեր է Ազգ.
Հիւանդանոցին, իբր զատկական նուէր:

— Զատկական տօներու առթիւ Պատրիար-
քարանը երեք հազար զրուշ բաժներ է Պոլսոյ
հայ բանտարկելոց:

— Պատրիարքարանի կորմէ շերամի հունտեր
զրկուել են վան, Երզնկա և ուրիշ տեղեր:

ԲՕՐԹ-ԱՐԹԻՐԻ ՄԷՋ ՀԱՅԵՐ

— Բօրթ—Արթիւրի մէջ, որ հիմա ճաբոնա-

կան նաւատորմիդի ուժրակոծութիւններու նպա-
տակակէտն եղած է. մէկ Թուրքիացի և երեք
Ռուսիացի հայերու վաճառատուններ կան: Պոլ-
սեցի վաճառականը Սարգիս Ճալալեան, պատե-
րազմէն վեց ամիս առաջ արգէն այդտեղ հաս-
տատած էր արեւմտեան չոր ուտելիքներու վա-
ճառատուն մը և կը ծախէ Պոլսէն, Սիրիայի եզեր-
քէն և Իտալիայէն բերել տուած ընդ եզէններն
ու մրգեղէնները. նաև ձէթ, ձիթապտուղ, լո-
գում, նարինջ, լեմոն, զանազան տեսակ ձու-
կեղէններ և այլն, որոնք Սինկաբուրի ճամբով կը
գրկուին Բօրթ—արթիւր: Այս առուտուր հոն շատ
շահաւոր է. ուստի շնայելով պատերազմի վտանգ-
ներուն, տակաւին իրենց գործ կը շարունակեն
այնտեղ յիշեալ չորս հայ վաճառատուններ, ինչ-
պէս կիմացուի անկէ գրուած նամակէ մը:

Արմէնիա

Գործաւն երկրագործական հանգէսը վերս-
կած է հրատարակուիլ, և այսուհետև կանոնա-
ւորապէս պիտի շարունակէ լոյս տեսնալ:

Սոյն հանգէսը որ հայկական ընդհանուր մա-
մուլին մէջ մէկ հատիկ է իր ուղղութեամբ և իր
առաջադրած նպատակով, կոչուած է բարերար
գեր մը կատարել հայ երկրագործութեան զար-
գացման գործին մէջ: Իր պարունակութեամբը
Թրքահայաստան և Կովկաս անոր մուտքը ազատ
ըլլալով, հայ երկրագործը գիւրութեամբ կը բ-
նայ կարգաւ պայն և օգտուիլ բոլոր երկրագոր-
ծական ու արհեստական նորութիւններէն, զորս
Գործաւն կը հաղորդէ իր հայրենակիցներուն:

Արտասահմանի գաղափարի աշխարհը ամենատեղեկար ծառայութիւն մը ըրած պիտի ըլլան իրենց գաղափար վարժարաններուն Գոլքան զրկելով և անոր ընթերցումը ընդհանրացնելով Հայաստանի էն յետին անկիւններն իսկ :

Սոյն օգտակար հանգէտին բաժանորդագրուիլ ուղղորդելուն պատրաստ ենք գիւրութիւններ ընծայել :

Կիմանա՞նք թէ Լորտ Բրոմբը նամակ մը ուղղելով տեղա գտնուող Գեր. Բարթոլոմէոս վարդապետին, — որ իբրեւ նախագահ ստորադրած էր Ալեքսանդրիոյ միթինկին կողմէ Անգլիոյ կառավարութեան ուղղուած հետադիւրը, — յայտնած է թէ Անգլիոյ արտաքին գործոց նախարարը հեռադիւր մը ուղղած է իրեն, որուն մէջ կըսէ թէ անգլիական կառավարութիւնը տակաւին պաշտօնական հաղորդում մը ստացած չըլլալով Մուշի հիպոթոզէն Հանանի կոտորածի մասին, ցարգ ու է գիմում չէր բրած թուրք կառավարութեան մօտ, բայց թէ հիմա իսկայն հրահանգ տուած է Պորտոյ իր զեպանին ճնշում բանցնել Գրան վրայ որ կոտորածներուն առաջը անմիջապէս առնուի :

Լորտ Բրոմբը՝ ներքին ուղարկելու է եղբոր իր ստացած սոյն հեռագրին պատճէնն ալ :

Պոլսէն կը գրեն Պուտաբէշի Հերլաքին թէ գիւտնագիտական շրջանակներու մէջ շատ կը խօսուի այն տենդոտ աճապարանքին վրայ որով Սուլթանը պայտու մը չ'ենել կոտայ Պրուսայի մէջ, որ հրամայած է փոխադրել Երլաքի կարասիները: Անրջին գէպերը և մանաւորապէս ալպանացիներուն ընթացքը այն աստ՝ ճան աղդեր են Սուլթանին վրայ որ մտադիր է փոխել բնակավայրը: Մեծ եպարքոս Քէրիտ բաշա և սենեկապետ Իզզէթ բաշա կը ջանան սուլթանը ետ կեցնել այս նպատակէն և կը փորձեն աղբել ալպանացոց վրայ :

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Որո՞ւս — ծաքոնական պատերազմը

Անցեալ թուով տպագրական սխալով մը գրւած էինք թէ ճարն 500,000 անգլիական ոսկիի փոխառութիւն մը կընէ Անգլիոյ մէջ, Այս փոխառութիւնը որ արգէն մեծ յաջողութեամբ

կ'ըսուած, իսկապէս հինգ միլիոն ոսկի է: Ճարն հինգ միլիոն ոսկիի փոխառութիւն մըն ալ Միացեալ Նահանգներու հետ կ'ըսած է, միևնույն յաջող պայմաններու մէջ:

— Անրջին հեռադիւրները կարեւոր բարեր չեն բերեր պատերազմի դաշտէն: 200 քաղաքներու վաշտ մը Անժուի վրայ յարձակում մը ըրեր ըսյց ետ մղուեր է քաղաքապահ զօրքէն:

— Իբր թէ Բորգ — արթիւրի ցամաքային հաղորդակցութիւնը, որուն ընդհատուիլը ծառայուած էր ասկէց առաջ, փրահատաւոր է:

— Բորթ — արթիւրի նաւկայրին մուտքին փակուիլը հարսնական փոխադրանաւորուն վերջին ընկզմումէն հաստատուած է:

— Լուր կայ թէ Ռուսերը կը պայթեցնեն Բորթ — արթիւրի մէջ բանտարկուած ռուս նաւաբաժին զրահաւորները, որպէսզի անոնք թշնամիին ձեռքը չ'ենան:

— Նիւ — Չուանկը բոլորովին պարպած են ռուսերը, անանկ որ շատ չ'անցած քաղաքը պիտի գրաւուի ճարնցիներէն:

— Փեդրոպուրի մէջ յստուկ յանձնաժողով մը կազմուած է քննելու համար թէ արգեօք կարելի է Պալթիկի նաւաբաժինը անցնել հիւսիսային ծովէն և Սիպերիոյ ծովեզերքէն փոխադրել Ծալրապոյն արեւելք, նկատելով որ Սուէզէն անցքը չափազանց երկար ժամանակի կարօտ է: Հաւանաբար սոյն յանձնաժողովին գործը ի դերե պիտի ելլայ, ձեռնարկին անհատնում գըծուարութեանցը պատճառաւ:

— Ռուսերը հիմնադրաւ կը քանդեն Տալնիի նաւահանգստին քարափն ու ամրութիւնները, որոնց համար միլիոններ ծախսուած են, որպէսզի ճարնցիները չի կրնան ամբողջ հոն երբոր տիրեն այդ նաւահանգստին:

— Չինաստանի կառավարութիւնը մեծաքանակ փամփուշտ կը գնէ Հունգարիայէ, Մինչեւ հիմա 15 միլիոն փամփուշտ ստացած է:

— Պարսից Ծառ Աւստրիոյ կառավարութեանէն 12 սպայ ուղեր է, պարսկական բանակը վերականգնելու համար:

— Խրանովալի եւ Օրանթի հանրաժանութիւն կիրններն, որ մինչեւ ցարգ Ոսկիի երկիրներ

կրտսէին, ասկէց ետքը ագամանդի երկիրներ պիտի կոչուին: Աղքատիկ հանքագործ մը դիպուածով գտեր է կապոյտ, կանաչ եւ դեղին ագամանդներու հանք մը: Գաղտնի պահելով այս գիտը՝ մէկ քանի օրուան մէջ յաջողեց է քանի մը հարիւր հազար ֆրանք հաւաքել: Տեղացած յորդահոս անձրեւներու հեղեղներէն զետիրը յորգեր, ու երբ ջուրերը քաշուեր են, մարդը գիւր լծեամբ հաւաքեր է ագամանդները:

ՀԱՅԻԾ

Անցեալ շաբթու մաքսային պաշտօնեաները Մարտիկի մէջ բռնեցին 49⁰ օրա հաշիշ, զոր պէտէվինները քաշաք մոցունել կուզէին:

Այս առթիւ շահեկանութենէ զուրկ չըլլար հետեւեալ քանի մը տեղեկութիւնները տալ:

Անցեալ տարի բնդամէնը 24,344 քիլօ հաշիշ բռնուած է, այսինքն 7,770 քիլօ աւելի քան 1902ին: Ամբողջ հունձքին գրեթէ կէսը դրաւուեր է կառավարութեան կողմ, հետեւապէս հաշիշին գինը շատ բարձրացած է եղիպտոսի մէջ: Գին այս բարձրացման հետեւանօք, սպառումը թեթեւապէս նուազեր է:

Իւրաքանչիւր կողմի (ծխափայտ) մէջ կը գրուի երկու ցորենահատ հաշիշ՝ մօտ հինգ միլիէմ արծաթաթեմբ, քիչ մը ածուխի հետ խառնուած: Մէկ կողմն ութը ծխողի բերնէ կանցնի, եւ իւրաքանչիւր ծխող կը վճարէ 2ուկէս միլիէմ, ժամանակով մէկ ծխափայտը 12 հոգի կը խմէ եղեր, որով հաշիշափածաւներու շահերը նուազած են, բայց դարձեալ շահը ահագին է:

Յիմարանոցի Տնօրէն Տօքթ. Վարանօքի տեղեկագրին նայելով, 1903ին յիմարանոց ընդունած 366 խենդերուն 67ը (100ին 16ը) հաշիշի գործածութենէ յիմարացած են, մինչ 1902ին 0/0 22¹/₂ էր, 1901ին 0/0 20, 1900ին 0/0 25 1999ին 0/0 23¹/₂, 1898ին 0/0 25 եւ 1897ին 0/0 33:

1903ին, դատարանները փակել տուած են 22 եւրոպական սրճարան եւ 1681 արաբական սրճարան, մինչ 1902ին 17 եւրոպական եւ 1325 արաբական սրճարաններ փակուած էին դատական իշխանութեանց կողմէ:

ՆՈՐ—ԴՍՐ ԿԱԹՆԱՐԱՆԸ ՎԵՐԱԲՈՅՈՒԱԾ Է:

որու Տնօրէնն է համակրելին Տ. Յ. Ղազարեան:

Անարատ կաթ եւ մաքուր սպասարկութիւն:

Դիմել Սարաֆիյէ՝ Շատր-Պաթըլի փողոց թիւ 23:

ԺԱՄԱՆՑ

Ն: ջ ՇՐՋԱՔԵՐԱԿԱՆ

Միտքեմակաւ կուսակցութեան

Կուսակցութեան Բ. պատգամաւորական ժողովին ներկայ էին հետեւեալ անդամները:

Պարոն Հ. Խ. Չինկեանէ մահալլէսիէն

" Յ. Ճ. Գալսէրի չարչըսիէն

" Յ. Գ. Գալազլէն

" Մ. Ս. Չալը մահալլէսիէն

" Պ. Ք. Բաշա քէօյիւէն

Իր հետ բերելով նաեւ ժողովրդի ձայնը:

Ինձի քէօյիւ եւ աճեմլէրի պատգամաւորները որոշ պատճառով բացակայ էին:

Գէսըրիմի պատգամաւոր ցուրտին սաստկութենէն եւ տեղատարաւ անձրեւին պատճառով չի կրցաւ ներկայ գտնուիլ:

Ուրեմն եկած Դերկայ 6 ձայները կուսակցութեան մեծամասնութիւնը կազմելով (?) ժողովը բացուեցաւ եւ որոշեց:

1. Միացնել անպայման կերպով բոլոր յեղ. կուսակցութիւնները:

2. Սոյն առաջին յօդուածին հակառակողները ճեղքօրի պիտի ենթարկուին անխտիր:

3. Նկատելով որ Վ. կուսակցութիւնը միշտ պատրաստ է մեզի հետ միանալու, ուրեմն մեր 2րդ. յօդուածի տրամադրութենէն զերծ կը մնան, ժողովն վերադառնալ յօդուածները վաւերացեալ յայտարարեց:

Հայ. Յեղ. Միութեան յանձնախումբ
Վառնա ատենադպիր ատենապետ
Կնիֆ

Կը խնդրուի սոյն շրջաբերականը հրատարակել ի գիտութիւն հայ հասարակութեան թէ մինակ Վառնայի մէջ գոյութիւն ունեցող սոյն մէկ քանի անձերն են սը կը խօսին իբրեւ մեր 2րդ. հայութեան կողմէ ու չեղածը եղածի տեղ կըլիցնել կը ջանան: Պատգամաւորական ժողովի մասին կը խօսին, բայց Վառնայէ դուրս ուրիշ մտրդ չի կայ: Երեւի թէ վերոգրեալ շրջաբերականին մէջ յիշուած գիւղերէն ու քաղաքին թաղերէն եկած են:

ՍԲՐՈՐԱ

Վառնա 18 փրիլ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՐՔԵՐ

ԳԳՈՒԹԻՆ ԿՈՒՏԸ,
ԱՆԵՔՍԱՆԴՐՈՅ ՈՒՍԸ.

Իսկ թանկանութեան հասանքին հետ իւր ընտանեօրը հոս ելած էր նաև Կիրակոս աղան, սակայն միշտ դժգոհ, վասնզի թէև Սուլթանին պարտեանէն ազատեցաւ, բայց հիւանդութեանց ու ֆէլլահներու պերին եղաւ. սուրին բնինէն վախաւ, բայց Խորիի գեղարանէն կէսիկի միջոցէն դարձաւ. ուստի միշտ կը սպասէր նախատառք պարագայի մը որպէս զի դարձեալ Պօլիս վերադառնայ. ու թէպէտև գաւառացի էր, սակայն երկար տարիներ Պոլսական կեանքով ապրած, հայրենիքը կարծեա խորթ կերպէր իր աչքին. Բիստունը անցած մտրդ մըն էր Կիրակոս աղան, առատաբով զբաղող. Իր խանութը տեսակ մը խորհրդարան էր. օրը օրին երեսն ելած քաղաքական և ազգային լուրերը հոն կը ձեռնուէին.

Այդ խորհրդարանէն անգամներէն էր Պ. Ֆէնտիկէլէնեանը, որ օր մը եկաւ կամայեակ մը Կիրակոս աղային խմացնել թէ «բաւարիտ մէջ վազը խառնակութիւն մը կ'սպասուի. Անգլիացիին դրօշակը պիտի քաշէ, օգտուելով Ռուս-Քարսնական պատերազմէն». Երբ Կիրակոս աղան լսեց այս լուրը, գոյն երեսնաց նորա շրջեցաւ, սակայն յիշելով թէ աշակերտ խօսքեր չառ անգամներ լըսած էր, ուստի իր յաճախ դարձած խօսքը կրկնեց, «Իդուսին կուտը, Ալէքսանդրիոյ սուտը», ձեռքի աշակերտի շարժումով մը օր կարծեա ըսել կուզէր դիմացիներն, «Իդուս ևս կամ դրօշակի կուտ. որ կը կլլես առանկ սուտ». Սակայն պարտն Ֆէնտիկէլէնեան իսրաւ զատաւտելու համար «Պ. Պրզմարքը ըսաւ» կըսէր. և որովհետև Պրզմարքին բաժը Կիրակոս աղային համար վճարական էր, ուստի նորէն պատեց զինք տխրութիւնը, զոր վայրկեան մը կորուսած էր Ալէքսանդրիոյ կամ լրագրիներու տաւրին առածովը.

Այն օրը մեծ անձկութեամբ իրիկունը բրաւ ու խանութը գոցելէ վերջ՝ տետրակները ծրարելով թերին տակն առած տուն գնաց. յաջորդօրը պատահելիք խառնակութեանց վրայ ինքն իրեն խօսելով. — Հոս ալ եկանք՝ չաշատեցանք, հիմա տունը ինչ ըսելու է. պզտիկ բանէն դող կեցան. էհ, բան մըն ալ չեմ ըսեր, քիչ մը տկար կըլլամ ու վաղը դուրս չեմ ելար—

Երբս ասն հասաւ, փոքրցին դուռը բաց պտնելուն, սկսաւ պոռալ.

— Դուռը ինչո՞ւ բաց ձգեր էք, ես ձեզի ամեն օր կրնամ քի գուռդ դոց պահէ, դրացիներդ ող մի բռնեք:

Տիկինը. — Որդ իկր պախալին զրկեցի քիչ մը իւր քերելու, անոր համար դուռը բաց մնաց.

— Սըսոր նայեցէք, ասանկ գիշեր վախիթ չօճուխը դուրս կը զրկուի՝

— Ի՞նչ կայ որ, նոր զրկածնիս չէ ես:

Կիրակոս աղան առանց պատասխանելու սենեակ մտաւ, տետրակները սնտուկին վրայ դրաւ, որուն բռնային վրան մօտեցած էր:

— Քա կնիկ, սնտուկին բռնիքը ինչո՞ւ վըրան թողոցեր էք.

— Քա ճանըմ ինչ կըլլայ. ասօր բան մը եղեր ես. դուռը բաց էք ձգեր, սնտուկը դոց էք ձգեր, չօճուխը դուրս էք զրկեր. ի՞նչ կայ ինչ եղաւ.

Կիրակոս աղան մտածելով որ խնդիրը թերեւ երեսն ելլէր ու կինը վախնար, ուստի ձայնը կտրեց ու սկսաւ իր տետրակներուն հետ խաղալ. կուզէր խանութին 50 ոսկի դրամագլխին վրայ զէրօ մըն ալ աւելցունելով 500 ընեւ, որպէսզի եթէ դժբաղդաբար կամ բարեբաղդաբար պատահելիք խառնակութեանց միջոցին ֆուս մը հասնէր խանութին, ըստ տետրակի գանձէր խաղաղութեան ժամանակ.

Ճաշէն վերջ գարձեալ առանձնացաւ իր սենեակը ու տետրակները շինելով զբաղեցաւ, այն օրերը թաղին մէջ հարուստ մը մեռած ըլլալուն, ուրիշներու վրայ ունեցած մէկ քանի անգանձելի պահանջները բոտ իր բարի սովորութեան անոր հաշույն յարմարցուց որպէս զի ժառանգորդներէն գանձէ. «անանկներուն հախէն առանկ զալու է» րտելով. Այսպէս մինչև առաւօտ զբաղելէ վերջ՝ արշալոյսին նստած տեղը քնացաւ. Երբ ընտանիքը եկաւ զինքը արթնցնել թէ ուշ մնացած էր խանութ երթալու. Ինք Կիրակոս աղան վախով վեր ցատկեց, կարծելով որ սպասուած խառնակութիւնը սկսած էր. յետոյ ինքզինքը գոնեւ. — Կնիկ, քիչ մը աւելարութիւն կ'զգամ, ինծի հանգիստ թողէք, արօր չպիտի կրնամ դուրս ելնել, դուռը դոց պահեցէք և դուրս մի ելլաք—: Ու մինչև օր օրն իրիկունը բրաւ, հարկը անգամ պատահանը վաղեց, պզտիկ չնուկ մը թնդանօթի ձայնին կը նմանցունէր ու կառքերու դրդիւնը խոթանի վճիռներն:

Հետեւեալ օրը Կիրակոս աղան ստիպուեցաւ խանութ երթալ, թէպէտև իր վախն ու կասկա-

ճը փարատած չէր, որ տեւեց ութ տաս օր, մինչեւ որ տեղական թերթի մը մէջ կարդաց Անգլո-Յորանսակոտն համաձայնութիւնը եզրագծոսի մասին 30 տարուան համար:

—Երեսուն տարի ալ վախ չկա՛յ, ըսաւ ու աչքը տետրակներուն տնկած՝ ձեռքը գլխուն զարնելով գոչեց. —Շատ է գգումին կուտը, Ալեքսանդրիս, ալ սո՛ւտը:

Վերոյիշեալ սուտին ազդեցութիւնը հազիւ 4ը կորսուէր կիրակոս ազալին վրայէն, ահա նոր լուր մը թունդ հանեց անոր սիրտը. —Սուլթանը մեռեր է. —ամեն բերնէ կը լսուէր այս խօսքը. ուստի խանութը գոցելով տուն վազեց և ուղտութեամբ աւետեց ընտանեացը Սուլթանին մահը. —Կնիկ, սա բախին բեր, չալա չալա եղիկէ կէթիւրոթ, մարդը թախտն նետեր է. ասօր եօթը ըրախիին օրն է. ալ գալ շաբթու Պալիս գացինք ու գացինք:

—Վալ ճանր՞ կիրակոս աղա, շիտակ Պէօյիւքտէրէ երթանք ազուր տուն մը բռնենք:

—Կուցես Պէօյիւքտէրէ երթանք, կ'ուզես Գիւլիւք տէրէ, մէյրը հոն նետուինք, հոս հէքիմի ու էզաճիի շարա տուլով խնդա անիճուեցաւ, պարէ ֆայտա՞ մը տեսնամ:

—Կիրակոս աղա, խըրոյանմիջ մըլլար ամաքան մը պիտի բռնմ:

—Ի՞նչ պիտի բռնա:

—Մէկալ հեղունեքուն պէս կէնէ սուտ չըլլայո՛ւ որ տերերին պոչ տեղը թունդ ելլալ:

—Չէ՛, չէ՛, սա անգամ իրաւ է. պիւթիւն մեծ թիւճառները կըսեն կոր, հէմ Պ. Պիլմարքը կարգացեր է թէյէկրաֆը. լեցուր սա ըրախին, կիտէր այսպէս հետք թօքա մը բնենք կնիկ:

Աւ կիրակոս աղան նոյն իրիկունը բաւական կոնծեց. ճաշի ժամանակ ալ շատուրախ զուարթ էր, երբ մոսթաֆան բերին, ասոր հայերէնը ես չի՛նամ եմ վարձապետութեանս ու մինչև այսօր միաքս է. «հոս եկուր նայիմ, ախլարախուն շաղախեալ, էրկայնացեալ և ի միջոյ նորա ծակեցեալ:

Ճաշէն վերջն ալ մինչև կէս գիշեր երազներ տեսաւ. . . բայց աչքով, թէ բնչպէս Պալիս պիտի երթային ու հանգիստ կեանք մը վարէին առանց հիւանդութեան, հոն չի կա՛յ կըսէր այսօր ժանտախտ, վաղը հնտախտ. երթանք, կնիկ, երթանք:

Մէկ ժամ վերջը կիրակոս աղան կը քնանար, անշուշտ երազելով Վոսթրի գեղածիծաղ ափունքը Առտուն կանախ խանութ վտղնց. նոր տեղեկութիւն կ'ուզէր Սուլթանի մահուանը մասին, միևնոյն պատասխանը կ'առնէր. «Սուլթա-

նը մեռեր է»: Բայց հեղեհալ օրը երջ լրագիրներուն մէջ կարդաց թէ Սուլթանը հիւանդ է. մեռած չէ—, ու երրորդ օրն ալ թէ Սուլթանը ոչ հիւանդ է ոչ մեռած, այլ քաջաւոյլ է. յուսախաբութեամբ գոչեց, «Ա» ամիս երկուք եղաւ խարուելս. ինչ կուզեն բռնն, խօսքը իմա է. Դդումին կուտը շատ է. Ալեքսանդրիս ալ սո՛ւտը:

ԱՇԽԱՐՀ

ԱՅԼԵԼԱՅԼԻՔ

Թրանսլալի մէջ մէկ հաւկիթը 3 շրջի կը ծախուի. մին օխան 20-25 շրջ, Օ. ր 15-20 ֆր. չահալն անգամ դժուարաւ կը հոգայ եղեր իր պէտքերը. Սակայն ամեն օր նոր սակեհանքեր երևան կ'ելնեն:

—Ամերիկայի Գոնսատ հահանդի Սէյէրանո քաղաքի քաղաքապետութեան նախագահն այս անգամ հետեւեալ ազդարարութիւնը հրատարակեր է. —«Քաղաքիս բոլոր ամուրիներն այս տարի պարտաւոր են ընդունել թաղաքիս ու եւ աղջկան կամ աչրի կնոջ ամուսնական առաջարկութիւնը և ամուսնանալ: Այդ առաջարկութիւնը մերժելու համար հարկ է նշանուած ըլլալ աղջկան մը կամ կնոջ մը հետ: Սոյն որոշման հաւաքակ վարուողներն խկոյն պիտի արտաքսուին քաղաքէս»:

Բո՛ւ. —Այդ քաղաքին աղջիկներն ու աչրի կիները անպատճառ քաղաքապետին հետ շընորհքով տեսնուինք մը ըրած ըլլալու են:



Տիկին մը ճամբան գացած ատեն կը տեսնէ որ 11 տարեկան տղայ մը թռչունի մը ձագրուանա՛ւ անոր հետ կը խաղաց:

—Ինչո՞ւ կը տանջես այդ թռչնիկը, հիմա մայրիկը զաւակը կը փնտռէ:

—Ներեցէ՛ք տիկին, կը պատասխանէ սպան, այս ձագրին մայրը մեռած է:

—Մեռած է մի՞, ինչո՞ւ աստ կը խօսիս, տըղաս:

—Ես սուտ չեմ խօսիր, տիկին, ասոր մայրիկին մեռած ըլլալը՝ քու պիտարկիդ վրայ կարած անոր փետուրները կը հաստատեն:

Երկու կոյրեր կը խօսէին կամուրջին վրայ,
իրարմէ բաժնուած ատեններն կրօնն .

— Յտե՛ս, թիւն . . . ?

Տիկին մը և բժիշկ մը .

— Ա՛հ տղաքիմոր, ձեր գիտութեան և բժշկական
կութեան այն ատեն պիտի հաւատամ, երբոր մի-
ջոյ՛ր գտնաք մարդ իկը երկուստարդացնելու .

— Բայց արդէն կընենք կար .

— Ի՞նչպէս .

— Խող տուած չունինք որ մինչև Յերութեան
հասնին :

Փոքր Թղթասար

Տ. Ա. Պոսթոն — Մեր գրատան մէջ կրնան
ծախուիլ այդ գիրքերը, բայց եթէ կուզեն անոնց
ազգը հրատարակել «Հայելի»-ի միջոցաւ, պարտա-
ւոր են ըստ սովորութեան խմբագրութեան ձեռ-
գիւ մէկ մէկ օրինակ .

ԳՐԱՏՈՒՆ ԵՒ ՏՊԱՐԱՆ «ՀԱՅԵԼԻ»

Աղեփանդիս

Սարաւիյէ, Կիլիկեան ճաշարանի ֆոյի քասաժին
մէջ .

ՏՊԱՐԱՆ . — Դիւրամտաշիւ գիներով կը տպագ-
րուին Հայերէն, Գրանսերէն, Արաբերէն, Անգլիերէն
և Յունարէն այցեւածս, հասցեւածս, նամակագրութիւն,
պահարան, հարսանեկան հրատարակութիւն, մահազգայ-
տարարութիւններ, ևն .

ԴՐԱՏՈՒՆ . — Աւանդում և գնումն Դատական,
Դատական, Արդարական և Թատերական գիրքերու .

Աւանդում և գնումն տեւակ նամակագրութե-
ան .

Աւանդումն Հայկական, Եգիպտական ու Եւրո-
պական գունուոր և բազմաթիւ քաղ-քութիւն .

Աւանդումն գրական պիտոյքներու՝ թուղթ, գրիչ,
տետրակ, պահարան, սեյփ . ևն .

Կիցան բաժանորդագրութեան արտասահմանեան
Հայ թերթերու և հանդէսներու .

Հասցէ . — Տիրան Փաշիպեան

Սարաւիյէ

Աղեփանդի

ՋՄԻՒՈՒՆԻՍԿԱՆ ՀԱՅ ԴՊԱՐԱՆԱՃԱՌԱՏՈՒՆ

Մ. ՊԵՏԵՐՍԻՆԵԱՆ

Թրիպոլիտի ետին՝ հօթէլ «Էն Ժօրժի կից .

Ամեն տեսակ լաւ նպատեղեաններէ զատ, Ձմիւն-
նիայէն քերուած ռնտի օղի, գլեհի, ձեթ, կարագ,
աճառ, տոփերով զոնսերգաներ, պահած սնու-
շեղէն եւ ոշտանկեր՝ նարինջ, բալ, բարձր թնկոյգ
եւ յում (զրզիճրգ) . նաեւ Արաշեհիի համեային
ջուր որ դժուարամարութիւնը կը դարձանէ .

Սոյն վաճառատունը կը խոստանայ իրեն դի-
մող յաճախորդները զոնսցնել անխաղախ ապ-
րանքներով եւ գիներու յաշարարութեամբ .

Մեր աշխարհը հաստատելու համար այցե-
լորդն մը քաւակաւ է .

Մեծաքանակ տ փախաքանակ յաճախա-
րութիւն անմիջապէս կը կատարուի .

ՏՕՔԻՕՐ ՓԱՇԱՅԵԱՆ ԽԱՆ

Խորհրդակա՛ն Բժիշկ Պարսից քաղաքաւանդ
Իշխանին

Այս անգամ Աղեփանդիս հաստատած չի-
նելով, պատի ունի յայտնելու յարգելի Հայ հա-
ւարակութեան, որ ամեն օր առաջները ժամը
9-էն 12 եւ երեկոյները 3-էն 5 հիւանդներ կրն-
դունի իր անմիջ, Աթթարին փողոց թիւ 31 .
Մզկիթին դէմը, երկրորդ յարկ .

Ներքին եւ վերաբուժական հիւանդութիւննե-
րու հետ, կը դարձանէ նաեւ երախաներու հիւան-
դութիւնները, 15 ատոյ մասնագիտական փորձա-
նութեամբ .

Յարող կերպով կը դարձանէ նաեւ Աւիանա-
մոյթիւնը եւ Մարմնամոյթիւնը, որոնց դէմ
հնարած է մասնաւոր դեղ մը եւ որուն շնորհիւ
Պարսկաստանի մէջ հազարաւորներ անկեղծաւ քոյած
են այդ մոյթիւնը .

2

ԴՈՒՆՈՒՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

Նոր Բաղիրք պատկերազարդ, Ֆրանսահայ
Երկու հատր՝ 1874 մեծադիւ երեսներով .

Ազգ . — Մասնաւոր փափաքելով որ իր երկասի-
րութիւնն մատչելի եւ օգտակար ըլլայ բոլոր Ազգին, մա-
նաւանդ որ իւր նպատակն է ամենին շնորհիւ, այլ զի-
տով իսկ վաճառել, որոշած է որ սոյն երկու հատրնե-
րը ի յիշատակ 25 Քրանքէն աւելի չարժեն .

Դիմել հեղինակին հետեւեալ հասցեով .

M. G. DE LUSIGNAN

103, Neuilly-sur-Sein. — France

Յանձնարարութիւնը կանխիկ վճարմամբ .

